Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 291 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում տնտեսական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի բարելավմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օգտվել Հայաստանի հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1. Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը ի դեմս Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության/ հասցե՝ Գերմանիա, քաղ. Բեռլին 10963, Ստրեսեմանշտրասե 94 2. Կարիտաս Գերմանիա/ հասցե՝ Գերմանիա, ք. Ֆրայբուրգ, Կարլշտրասե 40
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն Հասցե՝ քաղ. Գյումրի, Հ. Սարգսյան փ., 3-րդ նրբանցք, տուն 8 ՀՎՀՀ՝ 05514397
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ՝ քաղ. Գյումրի և 5 խոշորացված համայնք (Ախուրյան, Ամասիա, Աշոցք, Արթիկ և Անի), բնագավառը՝ համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 331,302 /երեք հարյուր երեսուն մեկ հազար երեք հարյուր երկու/ եվրոյին համարժեք դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	1. 200 սոցիալապես անապահով ընտանիք (1,000 անձ) /Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի չգազաֆիկացված համայնքներ/ (արևային համակարգերի տեղադրում): 2. 2 համայնքապատկան կառույց (300 հոգի) /Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի չգազաֆիկացված համայնքներ/ (արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրում): 3. 110 սոցիալապես անապահով ընտանիք (550 անձ) /Հայաստանի Հանրապետության

		Շիրակի մարզի չգազաֆիկացված համայնքներ/ (ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում): 4. 50 երիտասարդ և մեծահասակ /Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ/ (մասնագիտական արևային համակարգերի տեղադրման կարճաժամկետ դասընթացներ): 5. 4,000 աշակերտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թիրախ համայնքների դպրոցներից (բնապահպանության և վերականգնվող էներգիայի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում): 6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր բնակչություն (իրազեկվածության բարձրացում՝ կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի պահպանության, վերականգնվող էներգիայի և էներգախնայողության վերաբերյալ) մեդիա արշավների միջոցով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը՝ 07.04.2023 թվական Ավարտը՝ 31.07.2024 թվական
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Միջոցառումներ՝ ուղղված ծրագրի ակնկալվող արդյունքների իրականացման համար՝ 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի չգազաֆիկացված թիրախ համայնքներում սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում, համայնքապատկան կառույցների ընթացիկ ծախսերի և ածխածնային հետքի կրճատում՝ արևային համակարգերի տեղադրման միջոցով - 179,274 եվրոյին համարժեք դրամ: 2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի չգազաֆիկացված համայնքներում սոցիալապես անապահով ընտանիքների էներգաարդյունավետության բարձրացում՝ ջերմամեկուսացման և էներգախնայողությանը նպաստող գործողությունների միջոցով - 54,000 եվրոյին համարժեք դրամ: 3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում երիտասարդների և մեծահասակների կարողությունների զարգացում և իրազեկվածության բարձրացում բնապահպանության, վերականգնվող էներգիայի և էներգոարդյունավետության վերաբերյալ՝ դասընթացների, հանդիպումների, տեղական միջոցառումների միջոցով – 15,310 եվրոյին համարժեք դրամ: 4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության իրազեկվածության բարձրացում կլիմայի փոփոխության, շրջակա միջավայրի հիմնախնդիրների, ածխածնային

		հետքի, վերականգնվող էներգիայի մասին՝ մեդիա արշավների, ֆլեշ մոբերի, տպագրական նյութերի միջոցով – 16,913 եվրոյին համարժեք դրամ: 5. Կազմակերպական ծախսեր – 65,805 եվրոյին համարժեք դրամ Ընդամենը՝ 331,302 եվրոյին համարժեք դրամ Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 331,302 եվրոյին համարժեք դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Արևային թերմոսիֆոն և ֆոտովոլտային համակարգերի ձեռքբերում, տեղադրում, տեղադրման ամրությանը նպաստող նյութեր ձեռքբերում – 158,754 եվրոյին համարժեք դրամ: 2. Ջերմամեկուսացման և էներգախնայողության աշխատանքների համար նյութերի և պարագաների (ջերմամեկուսացիչ նյութեր, հանքային բամբակ, պատուհաններ և այլն) ձեռքբերում, տեղադրում - 54,000 եվրոյին համարժեք դրամ: 3. Իրազեկման բարձրացմանն ուղղված նյութերի տպագրություն (թերթոններ, բուկլետներ, պաստառներ), սոցիալական կարճ հոլովակների պատրաստում, մեդիա արշավների կազմակերպում - 15,050 եվրոյին համարժեք դրամ: 4. Աուդիտ - 6,000 եվրոյին համարժեք դրամ: 5. Կոմունալ ծառայությունների ձեռքբերում, միջոցառումների և վերապատրաստում-ների համար համայնքներում շահագործվող ավտոմեքենայի վառելանյութի և պահեստա-մասերի ձեռքբերում, գրասենյակային պարագաների ձեռքբերում և այլ գրասենյակային ծառայությունների ձեռքբերում - 26,050 եվրոյին համարժեք դրամ: Ընդամենը՝ 259,854 եվրոյին համարժեք դրամ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Աշխատավարձ - 33, 755 եվրոյին համարժեք դրամ: 2. Կոմունալ ծախսեր, միջոցառումների և վերապատրաստումների համար: համայնքներում շահագործվող ավտոմեքենայի վառելանյութի, պահեստամասերի ծախսեր, գրասենյակային պարագաների ձեռքբերում և այլ գրասենյակային ծախսեր - 26,050 եվրոյին համարժեք դրամ: 3. Աուդիտ – 6,000 եվրոյին համարժեք դրամ: Կազմակերպական ծախսերը կազմում են՝ 65,805 եվրոյին համարժեք դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Անմիջական համագործակցություն կիրականացվի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի, խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի հանրակրթական դպրոցների և մասնագիտական կրթական հաստատությունների, «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին: 2. Ծրագրի իրականացման վերահսկողությունը կրելու է պարբերական բնույթ և կատարվելու է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության, Կարիտաս Գերմանիայի կազմակերպության և «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Վարչական Խորհրդի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ